УДК 94(4/9)

Մ. ԲԱՐՍԵՂՈՎԻ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Վրեժ Հարությունյան
պ.գ.թ.
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
ԿԳՍ նախարարություն
Արցախ

Անոտացիա

Հայրենական պատերազմը սկսվելուն պես ԽՍՀՄ ղեկավարությունը Հեռավորարևելյան ռազմաճակատը համալրեց փորձառու սպաներով ու գեներալներով: 1942թ. հուլիսին Հեռավորարևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար նշանակվեց Մ. Ա. Բարսեղովը, որը մեծ աշխատանք կատարեց Ճապոնիայի դեմ ռազմական գործողությունների նախապատրաստության շրջանում: 1945 թ. օգոստոսի 9-ին սկսված խորհրդաճապոնական պատերազմում Մ. Բարսեղովը գլխավորում էր 2-րդ ռազմաճակատի հրետանին: Ճապոնացիների դեմ մարտերում Մ. Բարսեղովը բարդ և ծանր հանգամանքներում հմտորեն կազմակերպեց և ղեկավարեց հրետանու մարտական գործողությունները, որոնց ընթացքում ճիշտ պլանավորեց ու վարեց հրետանին, անսխալ ղեկավարեց հրետանու գործողությունները զորամասերի ու զորամիավորումների մարտերի ընթացքում: Մեծ էր Բարսեղովի դերը թշնամու ջախջախման, հրամանատարության առաջադրանքը հմտորեն կատարելու գործում:

Բանալի բառեր՝ *խորհրդաճապոնական պատերազմ, Մ. Բարսեղով, Հեռավոր Արևելք, ռազմաճակատ, հրետանի, հաղթանակ:*

Հայրենական պատերազմն սկսվելուն պես էլ ավելի սրվեց իրադրությունը Խորհրդային Միության և Ճապոնիայի սահմանագծում: Մանջուրիայում կուտակված ճապոնական զորքերը սպասում էին հարմար պահի՝ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար: Այդ պատճառով Խորհրդային Միությունը Հեռավոր Արևելքում տեղակայված իր զորքերը համալրում էր հիտլերյան Գերմանիայի դեմ պատերազմում փորձ ձեռք բերած գեներալներով ու սպաներով: Այսպես՝ Հեռավորարևելյան ռազմաճակատի հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Մ. Ա. Պուրկաևը, իսկ հրետանու հրամանատար՝ Մ. Ա. Բարսեղովը [1]: Նա այդ պաշտոնը ստանձնեց 1942 թ. հուլիսին՝ ունենալով խորհրդաֆիննական և Հայրենական պատերազմներում կուտակված հսկայական փորձ:

Միքայել Արտեմի Բարսեղովը ծնվել է 1899 թ. հունիսի 15-ին Արցախի Կոլխոզաշեն գյուղում: [2] 12 տարեկան հասակում, սոցիալական վատ վիճակից

ելնելով, ստիպված էր հեռանալ հարազատ ընտանիքից և հայրենի գյուղից՝ աշխատանք փնտրելու նպատակով: Նա բնակվում է Միջին Ասիայում՝ Անդիջան քաղաքում:

1918թ. Բարսեղովը կամավոր զենք է վերցնում, անդամակցում կարմիր բանակին ու մասնակցում Միջին Ասիայում բասմաչների դեմ պայքարին: [3] Պատերազմի ավարտից հետո Բարսեղովը ընդունվում է Տաշքենդի հրետանային ուսումնարանը, որն ավարտում է 1922թ.: [4]

1923-1930թթ. Միքայել Բարսեղովը ծառայել է խորհրդային բանակի տարբեր ստորաբաժանումներում: 1931 թ. նա արդեն ղեկավարում էր ուրալյան 57-րդ հրետանային գունդը: Այստեղից էլ սկսվում է Բարսեղովի կյանքի զինվորական վերելքը:

1932թ. Մ. Բարսեղովը մեկնում է Մոսկվա՝ ուսանելու Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Այնտեղ Մ.Բարսեղովը ձեռք է բերում տեսական խոր գիտելիքներ: Նա 1933թ. պետության կողմից պարգևատրվում՝ «Կարմիր դրոշ» շքանշանով: [5] Ակադեմիան ավարտում է 1936թ.՝ ոսկե մեդալով [6] ու նշանակվում լենինգրադյան ռազմական օկրուգի 69-րդ կորպուսի հրետանային գնդի հրամանատար, իսկ 1937թ. օգոստոսին՝ Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու պետ: [7]

Խորհրդաֆիննական պատերազմի ընթացքում խորհրդային բանակի հաղթանակի մեջ մեծ ներդրում ունեցավ հրետանու պետ Մ. Ա. Բարսեղովը: Նրան 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: [8] 1940 թ. հունիսի 4-ի ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ Մ. Բարսեղովը նշանակվում է Կարմիր բանակի հրետանու գեներալ-տեսուչ [9]՝ ստանալով հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում: [10]

1941թ. սկսվում է Հայրենական պատերազմը, և Մ. Բարսեղովը նշանակվում է Արևմտյան ուղղության հրետանու հրամանատար, ցուցաբերում արիություն և հմտորեն ղեկավարում հրետանին՝ հակառակորդին պատճառելով հսկայական կորուստներ: Նրա ղեկավարությամբ հրետանավորները ծանր հարվածներ են հասցնում թշնամուն Սմոլենսկում, Վիտեբսկում, Մոսկվայի մատույցներում:

1942թ. ամռանը Մ. Բարսեղովը նշանակվում է 40-րդ բանակի հրամանատար, իսկ հուլիսին, ինչպես նշեցինք, տեղափոխվում է Հեռավոր Արևելք: Այստեղ նա անմիջապես անցնում է գործի, հանդիպում սպաների հետ, նրանց մի մասին կարճ ժամանակով ուղարկում ռազմաճակատ՝ փորձ ձեռք բերելու նպատակով: Այնուհետև Բարսեղովը հանդիպում է զինվորներին, բարձրացնում նրանց մարտական պատրաստվածությունը, ուսումնասիրում տեղանքը, ծանոթանում մարտական գործողությունների թատերաբեմին:

Մ.Բարսեղովը բացառիկ մեծ աշխատանք կատարեց Ճապոնիայի դեմ ռազմական գործողությունների նախապատրաստության շրջանում, ընդ որում՝ հրետանու և շտաբի աշխատանքներն անցկացվում էին լեռնաանտառային ու

ճահճային բարդ տեղանքում: Նա անընդհատ իրականացնում էր հրամանատարաշտաբային զորավարժություններ՝ մեծ ուշադրություն դարձնելով ցամաքային զորքերի, ավիացիայի, ռազմածովային ուժերի և հրետանու համատեղ կազմակերպված գործողություններին:

Հեռավորարևելյան ռազմաճակատը բաժանվում է երկու ճակատների՝ 1-ին և 2-րդ: 1-ին ռազմաճակատի հրամանատար է նշանակվում Կ. Ա. Մերեցկովը, որը պետք է հարված հասցներ Գիրինի ուղղությամբ: 2-րդ ռազմաճակատի հրամանատար է նշանակվում Մ. Ա. Պուրկաևը, իսկ հրետանու հրամանատար՝ Մ. Ա. Բարսեղովը՝ գլխավոր հարվածային ուղղություն ունենալով Խարբինը: Երկրորդ Հեռավորարևելյան ռազմաճակատի երկարությունը կազմում էր 2130 կմ, որտեղ Խորհրդային Միությունը կենտրոնացրել էր 330 000 մարդ, 5985 հրանոթ և բազմատեսակ այլ տեխնիկա[11]: Զորքը, հրետանին պատրաստ էին մարտական գործողություններ սկսելու համար, հաստատվել էր համագործակցություն ավիացիայի, ռազմածովային ուժերի նավատորմի միջև: Միաժամանակ իրականացվեց ռազմամթերքի, նյութական և տեխնիկական միջոցների կուտակում:

1945թ. օգոստոսի 8-ին Հեռավորարևելյան երկու ռազմաճակատների զորքերը զբաղեցրին իրենց ելակետային դիրքերը: Սակայն սկսվեց հորդ անձրև, Ամուր և Ուսսուրի գետերի ջրի մակարդակը այնքան բարձրացավ, որ հրետանային մի քանի դիրքեր կարող էին հայտնվել ջրի տակ: Հրետանու գեներալ-լեյտենանտ Մ. Բարսեղովը անձամբ մեկնեց առաջնագիծ և Լենինսկոյե ավանի շրջանում տեղակայված հրետանային երկու գունդ տեղափոխեց ավելի անվտանգ դիրքեր:

Օգոստոսի 9-ի գիշերը սկսվեց գրոհը: Առաջապահ ջոկատները հեռահար հրետանու և ավիացիայի աջակցությամբ անցան Ամուր գետը: Երկու ռազմաճակատների զորամիավորումների գործողությունները կատարելապես համաժամանակյա էին: Մ. Բարսեղովը անձամբ է ղեկավարում հրետանային զորամասերի գետանցումը և անմիջապես հրամայում է կրակ բացել հակառակորդի մարտական դիրքերի վրա՝ ապահովելով հետևակի առաջխաղացումը: Փորձառու հրամանատարների անմիջական ղեկավարությամբ մարտերում թրծված խորհրդային զորքերը կարողացան ուժեղ դիրքեր գրավել Ամուր գետի հակառակ ափին: Արդեն օգոստոսի 18-ին 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատի զորքերը հասել էին Ցիցիկառյի, Սանսինի, Կաոցինի գծին՝ առաջանալով 200-300 կմ: Պատերազմը սկզբում ամենուրեք հաջող էր ընթանում:

Միևնույն ժամանակ մարտական գործողություններ էին ընթանում Կուրիլյան կղզիներում և Սախալինում: Մանջուրիայի տարածքում ճապոնական բանակի ջախջախման և Հարավային Սախալինը թշնամուց ազատագրելու գործում մեծ դեր խաղաց 2-րդ Հեռավորարևելյան հրետանին Մ. Բարսեղովի գլխավորությամբ: Նա հանգամանորեն ուսումնասիրում և վերահսկում էր իրավիճակը, ժամանակին տալիս ցուցումներ: Հրետանու գործողությունների շնորհիվ ծովային դեսանտ իջեցվեց Կուրիլյան կղզիներում: Մ. Բարսեղովը հմտորեն ղեկավարեց այդ

գործողությունները՝ լայնորեն օգտագործելով Խորհրդային բանակի՝ գերմանական ֆաշիստների դեմ պատերազմում կուտակված փորձը: Խորհրդային զորքերը ազատագրում են Խարբին քաղաքը:

Արդեն օգոստոսի 19-ից սկսած ճապոնական բանակները սկսեցին առանձին-առանձին անձնատուր լինել և գերի հանձնվել: Օգոստոսի 20-ից ճապոնական շտաբներում սկսեց գործել խորհրդային զինվորական պարետատները: 1945թ. սեպտեմբերի 2-ին ճապոնական կառավարությունը ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը: Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց: Այդ պատերազմում Խորհրդային Միությունն իր ուսերի վրա վերցրեց ծանրությունների վճռական բաժինը և գլխավոր դերը կատարեց թշնամու ջախջախման գործում ոչ միայն արևմուտքում, այլև արևելքում:

Խորհրդային զորքերի՝ Ճապոնիայի դեմ մարտական գործողությունների հաջող ավարտը վկայում է խորհրդային ռազմարվեստի ստեղծագործական բնույթի, զինվորների, սպաների բարոյական ու մարտական բարձր որակների մասին: Հեռավոր Արևելքում Ճապոնիայի դեմ պատերազմում 2-րդ ռազմաճակատի հրետանավորները հրետանու հրամանատար գեներալ-լեյտենանտ Մ. Բարսեղովի գլխավորությամբ պատվով կատարեցին իրենց առջև դրված բարդ խնդիրը: Գերագույն գլխավոր հրամանատարի 1945թ. օգոստոսի 23-ի հ. 372 հրամանով Ճապոնիայի դեմ մղվող կռիվներում աչքի ընկած գեներալների թվում էր Մ. Բարսեղովը: [12] Հայրենիքը բարձր գնահատեց գեներալ Բարսեղովի զորավարական տաղանդը՝ Մանջուրական քաղաքներն ու Հարավային Սախալինը ազատագրելու, մարտական առաջադրանքը կատարելու գործում՝ նրան պարգևատրելով Սուվորովի 2-րդ աստիճանի և Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշաններով: [13]

Բարձր գնահատելով Միքայել Բարսեղովի ծառայությունները հայրենիքի պաշտպանության գործում՝ Խորհրդային կառավարությունը նրան պարգևատրել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Հետպատերազմյան շրջանում փառապանծ գեներալը ծառայել է մի շարք ռազմական օկրուգներում: Այնուհետ նա 1948 թ. ավարտել է Կ. Վորոշիլովի անվան ռազմական բարձրագույն ակադեմիան, իսկ 1958 թ. նրան շնորհվել է գեներալ-գնդապետի կոչում: [14]

1964թ. ապրիլի 27-ին կյանքից անժամանակ հեռանում է Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-գնդապետ Միքայել Արտեմի Բարսեղովը:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1965թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ Լենինգրադի Բոգոսլովսկի գերեզմանատանը կանգնեցվեց Մ. Ա. Բարսեղովի կիսանդրին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 15:
2. Նույն տեղում, թ. 1:
3. Ռ. Հ., Հրետանու գեներալ-գնդապետ Միխայիլ Պարսեղով: «Մշակույթ», 2013, մայիս-հունիս, էջ 11:
4. Торкунов С., Герой Советского союза М. А. Парсегов (Воспоминания о совместной с ним работе и учебе), М., 1970, с. 3.
5. Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ:
6. Ղազարյան Ա., Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, հ. 1, Եր., 1975, էջ 47:
7. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 13:
8. Podvignaroda.ru, ЦАМО, ф. 33, сп. 793756, д. 36, л. 331(198). Տե՛ս նաև Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ: ՀԱԱ, ֆ. 688, ց. 4, գ. 106, թ. 31:
9. Հրետանու գեներալ-գնդապետը, «Սովետական Ղարաբաղ», 1975, մարտի 13: Տե՛ս նաև Книга о героях, Ер., 1985, с. 9-16.
10. ՀԱԱ, ֆ. 688, ց. 4, գ. 106, թ. 31: Տե՛ս նաև Арутюнян К., Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ер., 2009, ст. 95. Газ. «Известия», 6 июня 1940, № 129, с. 1.
11. История Второй мировой бойны 1939-1945, т. II, с. 195-196.
12. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 25:
13. Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ:
14. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 26:

РЕЗЮМЕ

РОЛЬ М. БАРСЕГОВА В СОВЕТСКО-ЯПОНСКОЙ ВОЙНЕ

Вреж Арутюнян

Ключевые слова: советско-японская война, М. Барсегов, Дальний Восток, фронт, артиллерия, победа.

С началом Великой Отечественной войны руководство СССР пополнилось опытными офицерами и генералами. В июле 1942 г. командующим артиллерией Дальневосточного фронта был назначен М. Барсегов, который проделал большую работу по подготовке военных действий против Японии. В советско-японской войне, которая началась в 9 августа 1945г., М. Барсегов возглавлял артиллерию 2-го фронта. В боях против японцев М. Барсегов в сложных и тяжелых обстоятельствах умело организовал и руководил боевыми действиями артиллерии, в ходе чего правильно планировал и вёл артиллерию, безошибочно руководил действиями артиллерии во время боев воинских частей и воинских соединений. Большая роль М. Барсегова была в разгроме врага, умело выполняя задание командования.

SUMMARY
M.BARSEGHOV'S ROLE IN SOVIET-JAPAN WAR
Vrezh Harutyunyan

Key words: Soviet-Japanese War, M.Barseghov, Far East, front, artillery, victory.

Since the outbreak of The Great Patriotic War, USSR leadership replenished The Far Eastern Front with experienced officers and generals. In July 1942, M.A.Barseghov was appointed commander of the artillery at the Far Eastern Front. He did a great job in the preparation for the military actions against Japan. In the Soviet-Japanese War which began on August 9, 1945 he headed the artillery of the second front. In the difficult circumstances of the fights against Japan, Barseghov skillfully organized and led military actions of the artillery, during which he properly planned and controlled the artillery, unmistakably ruled the artillery actions during the fights of military units and formations. When accomplishing the task of command to defeat the enemy the role of Barseghov was great.